# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 հոկտեմբերի 2023 թվականի N 429-Ա**

**«ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՆԱՀԻՏ ԱԹԱՆԵՍՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Քարահունջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմեն Մկրտչյանի դիմումը՝

**ո ր ո շ ու մ եմ՝**

1. «Քարահունջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմեն Մկրտչյանին 2023 թվականի հոկտեմբերի 31-ին տրամադրել չվճարվող արձակուրդ:

2. Տնօրենի պարտականությունների կատարումը արձակուրդում գտնվելու ընթացքում վերապահել նույն ՊՈԱԿ-ի ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալ Անահիտ Աթանեսյանին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ռ. Ղուկասյան**

2023թ. հոկտեմբերի 30
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290